ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

30 հունվարի 2015թ. **N 13-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, 13.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով 7-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին հանձնվող տեղական հանրաքվեի դնելու համար առաջարկվող որոշման նախագծի գրանցման վկայականի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված վկայականը կազմվում է երկու օրինակից: Օրինակներից յուրաքանչյուրին կցվում է տեղական հանրաքվեի դնելու համար առաջարկվող որոշման նախագծի մեկ օրինակ, թելակարվում և կնքվում է տեղական հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովի կողմից: Մեկ օրինակը պահվում է տեղական հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում, երկրորդ օրինակը տրամադրվում է նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մ ո ւ կ ո ւ չ յ ա ն**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2015թ. հունվարի 30-ի N 13-Ա որոշման

Օրինակ ___

ԹԻՎ _____ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

20 Թ. _____ «___» ԹԻՎ _____ ՈՐՈՇՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ «___» _____ 20 Թ.

Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Վ Ա Ծ Է

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ԹԻՎ _____ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

«___» _____ 20 Թ.

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

Տեղական հանրաքվեի դնելու համար առաջարկվող

_____

նշվում է որոշման անվանումը

Ո Ր Ո Շ Մ Ա Ն Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Գ Ր Ա Ն Ց Մ Ա Ն

Հանձնաժողովի նախագահ
Հանձնաժողովի նախագահի տեղակալ
Հանձնաժողովի քարտուղար
Հանձնաժողովի անդամներ

Կ.Տ

Տրված է «____» _____ 20 թ.